ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 28

ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ԱՊՐԻԼԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի պահանջով՝

Ավագանին որոշում է՝

1.<<ՍԱՐԱՎԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ի 2016թ. տարեկան նախահաշվի և աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:
2. Զառիթափ համայնքի 2017 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյակային հաղորդումը հաստատելու վերաբերյալ:
3. 2017թ. <<ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-Ի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների սակագները սահմանելու մասին:
4. <<ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ի 2017 թ-ի տարեկան նախահաշիվը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
6. Զառիթափ համայնքի 2017 թ-ի բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ կատարելու մասին:
7.<<ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ի հետ դրամաշնորհի ու սուբսիդիայի հատկացման և աշխատանքների կատարման պայմանագրեր կնքելու մասին:
8. Զառիթափ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
9.Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի **<<Զառիթափի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի** նոր տնօրենի թեկնածությունը հաստատելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ

2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ

6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Ջառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 29

<<ՍԱՐԱՎԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-Ի 2016 Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարավանի համայնքապետարանի և <<Սարավանի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվին կնքված դրամաշնորհի հատկացման ու աշխատանքների կատարման վերաբերյալ N 1/2 պայմանագրի 2.4 կետը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է՝

1. Հաստատել <<Սարավանի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի 2016 թ. տարեկան նախահաշվով նախատեսված ծախսերի և եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել <<Սարավանի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻ[illegible]
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԻ[illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված N 2
Զառիթափ համայնքի ավագանու
11. 04. 2017թ. թիվ 29 որոշման

Հաշվետվություն
,,Սարավանի բարեկարգում,, ՀՈԱԿ-ի 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

Սարավանի բարեկարգում ,, ՀՈԱԿ-ը պետական գրանցում է ստացել 03. 04. 2015թվին: ՀՈԱԿ-ի գործունեութ-
ն հիմնական տեսակներն են՝ գյուղատնտեսությունը, բարեկարգումը և աղբահանումը, ինչպես նաև օրենքով
ահմանված այլ աշխատանքների իրականացումը: 2016 թվականի ընթացքում նշված կազմակերպությունը Սա-
ավան համայնքում նախաձեռնել և իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք կարևոր նշանակություն
նեն համայնքի բնակչության համար: ,, Սարավանի բարեկարգում ,, ՀՈԱԿ-ի կողմից կատարված գլխավոր աշ-
ատանքներից մեկը դա գյուղատնտեսական կենդանիների կերարտադրության պրոցեսների մեքենայացումն է, որը
ղաստել է անասնապահության աճին: Պայմանագրային հիմունքներով Սարավանի համայնքապետարանի կողմից
ՈԱԿ-ին հատկացված գյուղատնտեսական տեխնիկայի և ընթացիկ դրամաշնորհի միջոցով կազմակերպությունը
ամայնքի բնակչության համար գյուղատնտեսական տարբեր աշխատանքները կարողացել է կատարել շուկայա-
անից էականորեն ցածր գներով, որը ներկայացվում է հետևյալ աղյուսակի ձևով.

հ	գյուղատնտեսական աշխատանքի անվանումը	չ/մ և քանակը	ընդամենը արժեքը /դրամ/	լրացուցիչ տվյալներ
1	խոտհունձի իրականացում	8,0 հա	96000	
2	խոտհավաքի իրականացում	8,0 հա	51200	
3	հակավորում	935 հատ	74800	թեյր՝ պատվիրատուից

ՀՈԱԿ-ի կատարած համաֆինանսավորման շնորհիվ համայնքում կառուցվել են գյուղատնտեսական կենդանիների 3 հատ ջրախմոցներ, հովվի տնակ և փարախ, որոնք էական դեր ունեն անասնապահության զարգացման գործում: 2016 թվականին ,,Սարավանի բարեկարգում,, ՀՈԱԿ-ի կողմից իրականացված հիմնական աշխատանքներից է նաև համայնքի աղբահանումը և սանիտարական մաքրումը: Կազմակերպությունը, իրեն ամրացված տեխնիկայի միջոցով, իրականացրել է գյուղամիջյան ճանապարհների ամառային ու ձմեռային պահպանման, հանդամիջյան ճանապարհների մաքրման և այլ աշխատանքներ: Նշված աշխատանքները կազմակերպելու նպատակով ՀՈԱԿ-ը ձեռք է բերել անհրաժեշտ ապրանքներ ու ծառայություններ, հիմնականում՝ տրանսպորտային և հատուկ նպատակային այլ նյութեր, ինչպես նաև տրանսպորտային սարքավորում:,,Սարավանի բարեկարգում,, ՀՈԱԿ-ը, համայնքի բնակչության կենսապահովման խնդիրների լուծման նպատակով, իրականացրել է նաև այլ ծառայություններ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Բաբայան

Հավելված N 1
Զառիթափ համայնքի ավագանու
11. 04. 2017թ. թիվ 29 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01. 01. 2016թ. — 31. 12. 2016թ. ընկած ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ *„Մարավանի բարեկարգում„ ՀՈԱԿ*
2. Փոստային հասցեն__ Վայոց ձորի մարզ, գյուղ Մարավան
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման 57
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը__ Մարավանի համայնքապետարան
5. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը
6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 2
(ՀՀ պետական բյուջե՝1, համայնքի բյուջե՝2)

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
Բաժին N
Խումբ N
Դաս N
9. Ծրագրի անվանումը ՀՈԱԿ-ի պահպանում
10. Ծրագրի կոդը
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման
12. Չափի միավորը՝ *հազար դրամ* 210039

01.01.2016թ. դրությամբ հաշվի մնացորդը՝ 1910,1 դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի,եկամուտների տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	հոդվածի NN	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Համայնքի ղեկավարի կողմից	Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ /պարտքեր/: Ընդամենը	որոնցից 30 օրից անց պարտքեր	Դրամարկղային մնացորդ
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում	X	14950.0			840.0	15790.0	14062.0					
1250	Ընթացիկ դրամաշնորհներ	7331	8000				8000	8000					
1300	Կապիտալ դրամաշնորհներ	7332	5000				5000	5000					
	Սեփական եկամուտներ	7400	1950			840	2790	1062					
2000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում	X	16860.1			840.0	17700.1	15863.3	15863.3	15863.3			108.8
4100	1.1 Աշխատանքի վարձատրություն	X	9020.0			-226.0	8794.0	8014.3	8014.3	8014.3			
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	9020.0			-226.0	8794.0	8014.3	8014.3	8014.3			
4200	1.2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	X	2790.0			444.0	3234.0	2227.0	2227.0	2227.0			
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	*4216*	480.0				480.0	324.0	324.0	324.0			
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	350.0				350.0	349.9	349.9	349.9			
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	50.0				50.0	50.0	50.0	50.0			
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	980.0			444.0	1424.0	1415.9	1415.9	1415.9			
4268	-Հատուկ նպատակային այլնյութեր	4269	930.0				930.0	87.2	87.2	87.2			
4700	1.3 Այլ ծախսեր	X	*50.1*				*50.1*	*0.0*	*0.0*	*0.0*			
4723	-Պարտադիր վճարներ	4823	50.1				50.1	0.0	0.0	0.0			
5100	1.1 Հիմնական միջոցներ	X	*5000.0*			*622.0*	*5622.0*	*5622.0*	*5622.0*	*5622.0*			
5112	-Շենքերի և շինությունների կառուցում	5112	1000.0			772.0	1772.0	1772.0	1772.0	1772.0			
5121	-Տրանսպորտային սարքավորումներ	5121	4000.0			-150.0	3850.0	3850.0	3850.0	3850.0			

Համայնքի ղեկավար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 30

ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով. <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

Ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Զառիթափ համայնքի ղեկավարի հաղորդումը 2017 թվականի առաջին եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. **ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ**
2. **ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ**
3. **ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ**
4. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ**
5. **ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ**
6. **ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 31-Ն

2017Թ-Ի "ՋԱՌԻԹԱՓ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ" ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջով.

Ավագանին որոշում է՝

Սահմանել " Զառիթափի բարեկարգում" ՀՈԱԿ-ի կողմից համայնքի բնակչությանը գյուղատնտեսական աշխատանքների կատարման դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:

Կողմ -6 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Ջառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 32

<<ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ի 2017 Թ. ՏԱՐԵԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է՝

Ջառիթափ <<Ջառիթափի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի 2017 թ. տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Զառիթափ համայնքի ավագանու
11. 04. 2017թ. թիվ 32 որոշման

ՏԱՐԵԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01. 01. 2017թ. - 31. 12. 2017 թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ *,,Զառիթափի բարեկարգում,, ՀՈԱԿ*
2. *Փոստային հասցեն՝* *Վայոց ձորի մարզ, գյուղ Զառիթափ*
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը
5. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը
6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 2
(ՀՀ պետական բյուջե՝1, համայնքի բյուջե՝2)

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
Բաժին N
Խումբ N
Դաս N
9. Ծրագրի անվանումը
10. Ծրագրի կոդը
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման
12. Չափի միավորը՝ *հազար դրամ* 210022

01.01.2017թ. դրությամբ հաշվի մնացորդը կազմում է՝ 108,8 հազ. դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու	ՀՀ կառավ. կողմից (համայնքի	Համայնքի ղեկավարի կողմից	Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված: Ընդամենը	որոնցից 30 օրից	Դրամարկղային մնացորդ
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝	X	22720,0										
1250	.-Ընթացիկ դրամաշնորհներ	7331	10000,0										
1260	.-Կապիտալ դրամաշնորհներ	7332	10000,0										
1300	.-Սեփական եկամուտներ	7400	2720,0										
2000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում.	X	22828,8										
4100	1.1 Աշխատանքի վարձատրություն	X	9598,0										
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	9598,0										
4200	1.2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	X	3060,8										
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4239	300,0										
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	200,0										
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	50,0										
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	1560,8										
4268	-Հատուկ նպատակային այլնյութեր	4269	950,0										
4700	1.3 Այլ ծախսեր	X	170,0										
4723	-Պարտադիր վճարներ	4823	170,0										
5100	1.4 Հիմնական միջոցներ	X	10000,0										
5112	-Շենքերի և շինությունների կառուցում	5112	9100,0										
5134	-Նախագծահետազոտական ծախսեր	5134	900,0										

Համայնքի ղեկավար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, քն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասիի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածների և <<Իրական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի, 70-րդ ու 72-րդ հոդվածների պահանջներով՝

Ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Զառիթափի համայնքի ավագանու <<Զառիթափի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 9-Ն որոշումը:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Չեռնպա՝0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Զառիթափ համայնքի ավագանու
[illegible] 2017 թվականի
[illegible]33-Ն որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

Տեղական տուրքեր

1.1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ' նոր շենքերի , շինությունների (ներառյայ' ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թուլատրության համար տեղական տուրք սահմանվում է.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ. / 0,5 գործակից /

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

1.2.Համայնքի վարչական տարածքում շենքեր, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝

շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

1.4. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար հինգ հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար հինգ հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար հինգ հարյուր դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար հինգ հարյուր դրամ:

1.5. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինը հազար հինգ հարյուր դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ:

/ 0,3 գործակից/

1.6. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

1.7. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

1.8. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

1.9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ:

1.10.Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ հինգ հարյուր դրամ: / 1,0 գործակից/

1.11. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ:

2.Տեղական վճարներ

2.1. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել հիսուն դրամ՝ յուրաքանչյուր օրվա համար (ծնող գանձում):

2.2. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ:

2.3. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման տեղական վճար սահմանել՝ երկու հարյուր դրամ:

2.4. Համայնքային ենթակայության կազմակերպության ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների՝ աղբահանության աշխատանքների կազմակերպման դիմաց փոխհատուցման տեղական վճար սահմանել մեկ շնչին հիսուն դրամ՝ յուրաքանչյուր ամսվա համար:

3. 1.1., 1.2, 1.3 ,1.4, 1.5 և 1.11 կետերի համար օգտագործվել է0.3գործակից
1.8 կետի համար 0.5 գործակից 1.7կետի համար 0.75գործակից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 34-Ն

ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով աղբահանության աշխատանքների համար սահմանված տեղական վճարի համայնքի բյուջե մուտքագրելու հետևանքով եկամուտների ավելացման հանգամանքը և ելնելով "Զառիթափի բարեկարգում " ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի իրականացման անհրաժեշտությունից

Առաջնորդվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով.

Ավագանին որոշում է՝

1. Բյուջետային եկամուտներում կատարել 720000 դրամի չափով ավելացումներ, որից՝ ա/Բյուջետային եկամուտների գործառնական դասակարգման 46 բաժնի 05 խմբի տնտեսագիտական դասակարգման 7422 <<-Տեղական վճարներ>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 720000 դրամով՝ նշված հոդվածով եկամուտ սահմանելով 1260000 դրամ:
2. Բյուջետային ծախսերում կատարել 720000 դրամի չափով ավելացումներ, որից՝ ա/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 2 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4511 <<-Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական/ համայնքային կազմակերպությունների>> հոդվածի տարեկան գումարը ավելացնել 720000 դրամով՝ սահմանելով 720000 դրամ:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ,, ՀՈԱԿ-Ի ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՈՒ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 35

ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ,, Զառիթափի բարեկարգում,, ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված 2017թվականի պահպանման ծախսերի նախահաշիվը և ելնելով համայնքի կարիքների համար գյուղատնտեսական բարեկարգման, աղբահանման և այլ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից

Առաջնորդելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի դրույթներով.

Ավագանին որոշում է

1. Հաստատել ,,Զառիթափի բարեկարգում,, ՀՈԱԿ-ի հետ դրամաշնորհի ու սուբսիդիայի հատկացման և աշխատանքների կատարման պայմանագրեր կնքելու մասին համայնքի ղեկավարի 22.03.2017թ. թիվ 19 որոշումը:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4637 <<-Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 10000000 /տաս միլիոն/ դրամ, տնտեսագիտական դասակարգման 4655 <<-Կապիտալ դրամաշնորհներ՝ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպությունների>> հոդվածով 10000000 /տաս միլիոն/ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 4511 <<-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական /համայնքային/ կազմակերպություններին>> հոդվածով 720000 /յոթ հարյուր քսան հազար/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ գյուղատնտեսական, բարեկարգման, աղբահանման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի իրականացման, ինչպես նաև ՀՈԱԿ-ի տրանսպորտային սարքավորումների համար կայանատեղ կառուցելու նպատակով:

3. Հանձնարարել ,,Զառիթափի բարեկարգում,, ՀՈԱԿ-ին աշխատանքների իրականացումից հետո Զառիթափի համայնքապետարանին ներկայացնելու կատարված աշխատանքների և ծախսերի մասին սահմանված ձևի հաշվետվություններ:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 36

ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի ,,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմելու կարգը հաստատելու մասին,, թիվ 1918 որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001թ-ի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> անդամների թիվ 24 և թիվ 40 /10.04.2015թ./ դրական եզրակացությունները.

Ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Զառիթափ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.04 հա արոտ /Զառիթափ բնակավայր, կադաստրային ծածկագիր՝ 10-022-0201-/ և 0.02 հա վարելահող /Սարավան բնակավայր, կադաստրային ծածկագիր՝ 10-039-0402-/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտայի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի օբյեկտների հողեր գործառնական նշանակության:
2.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Զառիթափ համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից 0,2 հա /Զառիթափ բնակավայր ծածկագիր 10-022-0238-0045/ փոխադրել բնակավայրերի հողերի կատեգոիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության /ԱԳԼՃԿ/:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 37

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՋԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ-ի ՆՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետով.

Ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն
Զառիթափ համայնքի <<Զառիթափի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակել Թաթուլ Յուրիկի Վարդանյանին:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

1.ԱՍԼԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
2.ԲԱԲԱՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ
4.ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ԴԱՎԹՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԵՎԱԴԱ
7.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԻՐԱԲ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ